ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"_4_" _ապրիլի_ 2011թ №56Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՆԻՁՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՅԻՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության 1998թ. մայիսի 5-ի ՀՕ-217 օրենքի 26-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.13. կետի դ) ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. հոկտեմբերի 12-ի «ՀՀ քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողություն իրականացնելու կարգը սահմանելու մասին» N 624 որոշմամբ սահմանված կարգի 3-րդ կետի դրույթներով, համաձայն ՀՀ Սյունիքի մարզպետի 2010 թվականի հուլիսի 27-ի «ՀՀ Սյունիքի մարզի քաղաքային և գյուղական համայնքներում քաղաքաշինական գործունեության պլանային ստուգումներ անցկացնելու նպատակով հանձնաժողովի կազմը, ստուգման ժամանակացույցը և առաջադրանքը հաստատելու մասին» N 150 «Ա» որոշման պահանջների և ՀՀ Սյունիքի մարզի Վարդանիձոր գյուղական համայնքում կատարված պլանային ստուգմամբ արձանագրված արդյունքների, **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ընդունել ի գիտություն ՀՀ Սյունիքի մարզի Վարդանիձոր գյուղական համայնքում քաղաքաշինական գործունեության ոլորտում կատարված պլանային ստուգման արդյունքները՝ համաձայն կազմված արձանագրության /կցվում է/:

2. Քաղաքաշինական գործունեության բնագավառում առկա խնդիրներին սահմանված կարգով լուծում տալու նպատակով վերոհիշյալ գյուղական համայնքի ղեկավարին առաջարկվում է.

1) օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել համայնքի վարչական տարածքում հողահատկացման, ճարտարապետահատակագծային առաջադրանքների և շինարարության թույլտվությունների տրամադրման, դրանց նախագծերի հաստատման, համաձայնեցման, ինչպես նաև ինքնակամ շինարարությունների կասեցման և դրանց հետևանքների վերացման ուղղությամբ տարվող գործընթացները՝ ապահովելով քաղաքաշինական գործունեության բնագավառում իրավական ակտերի,

քաղաքաշինական փաստաթղթերի և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջների կատարումը:

2) քաղաքաշինական գործունեության պլանային ստուգման արդյունքները քննարկել համայնքի ավագանու նիստում:

3) ձեռնարկված միջոցների մասին սահմանված կարգով նախատեսված ժամկետներում տեղյակ պահել ՀՀ Սյունիքի մարզպետարան:

3. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2011թ. ապրիլի 4
ք. Կապան